2026-2027 ուսումնական տարվա ընդունելության քննությունների 1-ին փուլի մեկնարկ

Բուհերի ընդունելության առաջին փուլի քննությունների դիմում-հայտերն ընդունվում են դեկտեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 25-ը, ժամը 18:00-ը

Միասնական քննությանը մասնակցելու համար շրջանավարտը (դիմորդը) առցանց եղանակով Գնահատման և թեստավորման կենտրոնի **dimord.am** կայքէջում պետք է լրացնի ընդունելության դիմում-հայտ:
Շրջանավարտը (դիմորդը) առարկայական դիմում-հայտում լրացնում է առավելագույնը երկու միասնական քննություն: Դիմում-հայտը լրացնելու համար շրջանավարտը դիմում է իր ուսումնական հաստատության տնօրենին, իսկ նախորդ տարիների և 2025-2026 ուստարվա նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները, օտարերկրացիները, օտարերկրյա ուսումնական հաստատությունների՝ տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները դիմում են իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված ուսումնական հաստատության տնօրենին:

Ընդունելության դիմում-հայտը լրացնելու համար անհրաժեշտ է նաև՝

- 3×4 չափի լուսանկարի էլեկտրոնային տարբերակը,
- անձնագրի կամ ծննդյան վկայականի տվյալները,
- ՀՀ ֆինանսների նախարարությունում Գնահատման և թեստավորման կենտրոնի **900018003401** հաշվեհամարին յուրաքանչյուր քննության համար փոխանցված 4500 (չորս հազար հինգ հարյուր) դրամ վճարի անդորրագիրը:

Միասնական քննությունների վճարից ազատվում են՝

- պարտադիր ժամկետային ծառայությունից զորացրված անձինք,
- 1-ին և 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները,
- ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին համապատասխանաբար կցում են զինվորական գրքույկի պատճենը, հաշմանդամության տեղեկանքի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրված տեղեկանքների պատճենները, ինչպես նաև առանց

ծնողական խնամքի մնացած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի պատճենները:

Ստորև կարող եք տեսնել առանձնացված ուսումնական հաստատությունների ցանկը՝

Ցանկ

Նախորդ տարիների, նախնական ու միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները, օտարերկրացիները, օտարերկրյա ուսումնական հաստատությունների՝ տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք բուհ ընդունվելու համար հանձնելու են միասնական քննություններ <<Հայոց լեզու և հայ գրականություն>>, <<Մաթեմատիկա>>, <<Հայոց պատմություն>>, <<Ռուսաց լեզու>>, <<Օտար լեզու>> (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, պարսկերեն, իտալերեն), <<Քիմիա>>, <<Ֆիզիկա>>, <<Աշխարհագրություն>>, <<Կենսաբանություն>> առարկաներից, դիմում-հայտը լրացնելու համար իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված հետևյալ ուսումնական հաստատությունից պետք է վերցնեն ԳԹԿ անձնական համար.

Երևան	Թիվ 65 ավագ դպրոց (Շենգավիթ)
	Թիվ 16 ավագ դպրոց (Էրեբունի, Նուբարաշեն)
	Թիվ 114 ավագ դպրոց (Կենտրոն, Նորք-Մարաշ)
	Թիվ 54 ավագ դպրոց (Արաբկիր)
	Թիվ 190 ավագ դպրոց (Մալաթիա-Սեբաստիա)
	Թիվ 62 ավագ դպրոց (Նոր Նորք)
	Թիվ 127 ավագ դպրոց (Քանաքեռ-Զեյթուն)
	Թիվ 118 ավագ դպրոց (Աջափնյակ, Դավթաշեն)
	Թիվ 170 ավագ դպրոց (Ավան, Առինջ)
Կոտայքի մարզ	Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց
	Աբովյանի թիվ 6 ավագ դպրոց
	Եղվարդի ավագ դպրոց
	Նոր Հաճնի ավագ դպրոց
	Բյուրեղավանի ավագ դպրոց
	Չարենցավանի ավագ դպրոց
Գեղարքունիքի մարզ	Գավառի ավագ դպրոց
	Սևանի ավագ դպրոց
	Մարտունու ավագ դպրոց

	Վարդենիսի ավագ դպրոց
	Ճամբարակի ավագ դպրոց
Արագածոտնի մարզ	Աշտարակի ավագ դպրոց
	Թալինի ավագ դպրոց
	Ապարանի ավագ դպրոց
	Ծաղկահովիտի միջն. դպրոց
Վայոց ձորի մարզ	Եղեգնաձորի վարժարան
	Ջերմուկի կրթահամալիր դպրոց
	Վայքի ավագ դպրոց
Արարատի մարզ	Արտաշատի ավագ դպրոց
	Արարատի ավագ դպրոց
	Մասիսի ավագ դպրոց
Սյունիքի մարզ	Կապանի թիվ 9 ավագ դպրոց
	Մեղրու թիվ 1 միջն. դպրոց
	Գորիսի թիվ 4 ավագ դպրոց
	Սիսիանի ավագ դպրոց
Լոռու մարզ	Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց
	Ալավերդու թիվ 5 ավագ դպրոց
	Սպիտակի ավագ դպրոց
	Ստեփանավանի ավագ դպրոց
	Տաշիրի ավագ դպրոց
Շիրակի մարզ	Գյումրու թիվ 2 ավագ դպրոց (Գյումրի, Ախուրյան)
	Արթիկի թիվ 3 ավագ դպրոց
	Մարալիկի թիվ 1 միջն. դպրոց
	Աշոցքի միջն. դպրոց
	Ամասիայի միջն. դպրոց
Արմավիրի մարզ	Արմավիրի թիվ 1 ավագ դպրոց
	Վաղարշապատի թիվ 2 ավագ դպրոց
	Մյասնիկյան գյուղի միջն. դպրոց
Տավուշի մարզ	Իջևանի ավագ դպրոց
	Դիլիջանի ավագ դպրոց
	Նոյեմբերյանի վարժարան
	Բերդի ավագ դպրոց